Հայաստանի Հանրապետության «Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շիրակամուտի <<Արևիկ>> մանկապարտեզ» ՀՈԱԿ

ՀՐԱՄԱՆ N 32

«24» դեկտեմբեր 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐԵՎԻԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ, ՏԱՐԱԾՔԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ, ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՍԽԵՄԱՆ, ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ, ԸՍՏ ԲՆՈՐՈՇ ԱՂԵՏՆԵՐԻ՝ ՍՏԱՆԴԱՐՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի «ա» կետով և աղետների ռիսկերի նվազեցման, արտակարգ իրավիճակներում անձնակազմի ու երեխաների պաշտպանությունն արագ և արդյունավետ կազմակերպման նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության «Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շիրակամուտի <<Արևիկ>> մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) տարածքի սխեմատիկ պատկերը և շենքի հատակագծերը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների պլան-ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) ազդարարման և տեղեկատվության փոխանակման սխեման՝ համաձայն N 4 հավելվածի,

5) տարահանման պլանը՝ համաձայն N 5 հավելվածի,

6) ըստ բնորոշ աղետների՝ ստանդարտ գործողությունների ընթացակարգերը՝ համաձայն N 6 հավելվածի,

2. Սույն հրամանի 1-ին կետով հավելվածները հաստատվում են երեք տարի ժամկետով:

3. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման ժամանակ՝ սույն հրամանի 1-ին կետի 6-րդ ենթակետով հաստատվող N 6 հավելվածում ներառված միջոցառումներից որևէ երեքը իրականացնելու դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

5. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Տնօրեն՝ Ն. Ավիրունյան